

բովանդակութեան վրայ. «Չգեա զբաշխող
աւրհնութեան սուրբ զաջ քո, եւ աւրհնեայ
զսեղանս զայս եւ զառաջիկայ հատս եւ
զգիւնս՝ զոր մատուցանեմք յաւրինակ ա-
մենայն սուրբ մարտիրոսացն եւ յիշատակ
հոգւոց հանգուցելոց»։ Եւ հուսկ կ'աղերսէ
ճաշակողաց ու նուիրատուաց համար. «Եւ
շնորհեայ ամենեցուն որք հաղորդին ի սը-
մանս՝ զփրկութիւն առողջութեան կենաց
եւ քաւութեան մեղաց։ Տուր Տր. վարձս
բարիս մատուցողաց պատարագիս... ջըն-
ջեայ զձեռագիր յանցանաց ամենայն ժո-
ղովրդեանս»։ եւ այլն։

6. — Սեղանք։ — Իւր նիւթերն էին
ուրեմն մսեղէնք, արմտիք ու զինի։ Որ-
բելեանի ոգեհացը կը կազմուէր «ա-
ռատ բոճկօք կերակրոց եւ ըմպելեաց»
(աստ, 355)։ Այս տեղ ըմպելեաց կարեւո-
րութիւնն զգալի է Հոռոմոսի վանուց մէկ
արձանագրութեան մէջ եւս՝ 1229ին, ուր
կտակարարն այգի մ'է թողեր եկեղեցւոյն,
պայմանաւ՝ որ փակակալը «գինոյն իշ-
խանութիւն ունի՝ որ ի մեր պատարագի
յաւրն հասարակաց սեր առևեկ» (Շիր. 24)։

Որ եւ է հայ կոչնոց մէջ չէր կարող
մտնել զինին՝ առանց իւր հետ բերելու
չափազանցութիւնն ու զեղծումն ալ, ինչ
որ կը տեսնուէր ամբողջացի քրիստոնէից ա-